ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՐԹՈՒԹՅԱՆԵՎԳԻՏՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԵՎՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙУНИВЕРСИТЕТ
А Р Х И Т Е К Т У Р Ы И С Т Р О И Т Е Л Ь С Т В А
nА Р М Е Н И И

ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА
ОБРАЗОВАНИЯ

MINISTRY OF EDUCATION AND
SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONALUNIVERSITY OF
ARCHITECTURE AND CONSTRUCTION OF
ARMENIA

CENTER OF EDUCATION
QUALITY ASSURANCE

19 մայիսի 2016թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում ՃՇՀԱՀ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի հարցման արդյունքների վերաբերյալ

1. Նախաբան

ՃՇՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ Որակի կենտրոն)՝ 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում անցկացրել է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի հարցում:

Հարցման նպատակն էր.

1. պարզել, թե որքանով է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը բավարարված՝
   - ուսուցման գործընթացի կազմակերպմամբ,
   - աշխատանքային պայմաններով և միջավայրով, ներառյալ ղեկավարումն ու հաղորդակցությունը,
   - աշխատավարձով, կարիերայի աճի և վերապատրաստումների ու մասնագիտական զարգացման պայմաններով:
2. բացահայտել առավել խնդրահարույց ուղղությունները և ներկայացնել առաջարկություններ դրանցում բարեփոխումներ իրականացնելու համար:

Հարցումը կազմակերպելու նպատակով Որակի կենտրոնը՝ համալսարանի Կադրերի բաժնի օժանդակությամբ, կազմել է հարցվողների ցանկը, մշակել և հաստատել է հարցաթերթ, կազմակերպել և իրականացրել է հարցումները՝ ըստ ամբիոնների, իրականացրել է հարցման արդյունքների վերլուծություն, ամփոփում և հաշվետվության կազմում:

Հարցումն անց է կացվել համալսարանի 28 ամբիոններում ընդգրկված 506 դասախոսների շրջանում, որոնցից 329-ը հանդիսանում են համալսարանի հիմնական աշխատակից, 147-ը՝ համատեղությամբ, իսկ 30-ը՝ ժամավճարով աշխատող աշխատակիցներ: Մշակվել է 36 հարց պարունակող հարցաթերթ (տես՝ Հավելված 1), որը պարունակում է 8 ընդհանուր բնույթի, 16 աշխատանքային և ուսումնական պայմանները գնահատող և 4 բաց հարց:

2. Հարցվողների ընտրանիի ընդհանուր տվյալները

Հարցման ընտրանիում ներառվել են կամավոր սկզբունքով հարցաթերթը լրացրած

0009 Երևան, Տերյան105,
0009 Yerevan, Teryan 105,
0009 Ереван, Терян 105

Tel: /Fax: (+374 10) 58.37.73
E-mail: vhovhannisyan@nuaca.am

դասախոսները: Կամավոր սկզբունքով, հարցմանը մասնակցել են համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմում ընդգրկված 506 անդամներից 320-ը, կամ՝ ընդհանուրի 63%-ը:

Ընտրանիում ներառված անձանց սեռատարիքային բաշխվածությունը ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 1-ում: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, համալսարանի՝ հարցմանը մասնակցածների 28%-ը 63 տարեկանից բարձր է և միայն 25%-ն է ներառված 35-ից ցածր տարիքային խմբում: Ընդ որում, մինչև 35 տարեկան տարիքային խմբում սեռային բաշխվածությունը գրեթե հավասար է, իսկ ահա 65 տարեկանից բարձր տարիքային խմբում տղամարդիկ բացարձակ մեծամասնություն են կազմում.

Աղյուսակ 1. Ընտրանիում ներառված դասախոսների սեռատարիքային բաշխումը

	Տղամարդ	Կին	Չեն նշել	Ընդհանուրը
մինչև 35	35	37	9	81 (25%)
36-45 տարեկան	10	32	7	49 (15%)
46-63 տարեկան	45	41	7	93 (29%)
63 տ-ից բարձր	65	18	6	89 (28%)
Չեն նշել	1	3	4	8 (3%)
Ընդհանուրը	156 (49%	131 (41%)	33 (10%)	320 (100%)

Հարցման ընտրանիի 276 անդամներ նշել են իրենց աշխատանքի ընդունվելու տարին: Այդ տվյալները վերլուծելիս պարզ է դառնում, որ նրանց 20%-ը համալսարանում աշխատանքի է ընդունվել 1959-1990 թվականների ընթացքում, իսկ վերջին վեց տարվա ընթացքում աշխատանքի է ընդունվել հարցվածների 28%-ը: Դասախոսների աշխատանքի ընդունման ժամանակահատվածի վերաբերյալ առավել մանրամասն տվյալները ներկայացված են Աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2. Ընտրանիի բաշխումը ըստ աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածի

Աշխատանքի ընդունվելու տարին	Քանակը	Քանակը (%)
1959-1990	56	20%
1991-2000	47	17%
2001-2010	95	34%
2011-2016	78	28%
Չեն նշել	44	14%
Ընդհանուրը	320	100%

Հարցմանը մասնակցած 320 անձանցից 146-ը (46%) նշել են, որ իրենք ունեն մեկ դրույք զբաղվածություն (տես՝ Աղյուսակ 3): Լրիվ դրույք զբաղվածություն ունեցող անձանց տոկոսն առավել բարձր է 63-ից բարձր (53%) և առավել ցածր՝ 35-ից ցածր (42%) տարիքային խմբերում:

Միաժամանակ, կես կամ մեկ քառորդ դրույքով աշխատող անձինք կազմում են հարցվածների 39%-ը: Կես կամ մեկ քառորդ դրույք զբաղվածություն ունեցող անձանց թիվն ամենամեծն է մինչև 35 տարեկան տարիքային խմբում, (42%) և ցածր՝ 63 տարեկանից բարձր տարիքային խմբում (35%).

Աղյուսակ 3. Ընտրանիի բաշխումը ըստ տարիքի և աշխատանքային ծանրաբեռնվածության

	Լրիվ դրույք	Երեք քառորդ դր.	Կես դրույք	Մեկ քառորդ դր.	Ժամավճար	Չեն նշել	Ընդհանուրը
մինչև 35 տարեկան	34	6	23	11	2	5	81 (25%)
36-45 տարեկան	20	7	8	9	2	3	49 (15%)
46-63 տարեկան	44	4	31	7	4	3	93 (29%)
63 տ-ից բարձր	47	5	27	4	4	2	89 (28%)
Չեն նշել	1	0	3	1	0	3	8 (3%)
Ընդհանուրը	146 (46%)	22 (7%)	92 (29%)	32 (10%)	12 (4%)	16 (5%)	320 (100%)

Համաձայն ընտրանիում ներառվածների ներկայացրած տվյալների, գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեն հարցվածների 36%-ը, իսկ գիտությունների դոկտորի աստիճան՝ 8%-ը: Հարցվածների կեսից ավելին՝ 56%-ը այս հարցին չեն պատասխանել կամ ունեն մագիստրոսի աստիճան:

Նաև, հարցմանը մասնակցած անձանց 12%-ը ունի պրոֆեսորի, 27%-ը՝ դոցենտի, իսկ 19%-ը՝ ասիստենտի կոչում: Գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի կոչում ունեցող անձանց թիվը 23 է (7%), իսկ գիտությունների թեկնածուի աստիճան և ասիստենտի կամ դոցենտի կոչում ունեցող անձանց թիվը՝ 105 (33%): Մանրամասների համար տես Աղյուսակ 4.

Աղյուսակ 4. Ընտրանիում ներառվածների բաշխումն ըստ գիտական աստիճանների և կոչումների

	Դասախոս	Ասիստենտ	Դոցենտ	Պրոֆեսոր	Չեն նշել	Ընդհանուրը
Գիտ. թեկնածու	1	**40**	**65**	7	1	114 (36%)
Դոկտոր	0	0	4	**23**	0	27 (8%)
Մագիստրոս կամ չեն նշել	115	21	17	7	19	179 (56%)
Ընդհանուրը	116 (36%)	61 (19%)	86 (27%)	37 (12%)	36 (11%)	320 (100%)

Հարցման մասնակիցները նշել են այն օտար լեզուները, որոնցով կարող են դասավանդել: Նրանց ճնշող մեծամասնությունը (85%) նշել է, որ կարող է դասավանդել ռուսերենով, իսկ 36%-նշել է, որ կարող է դասավանդել անգլերենով (Աղյուսակ 5).

Աղյուսակ 5. Օտար լեզվով դասավանդելու կարողության ունեցող դասախոսների քանակ

Օտար լեզու	Դասախոսների քանակը	Դասախոսների քանակը (%)
Ռուսերեն	272	85%
Անգլերեն	116	36%
Ֆրանսերեն	18	6%
Գերմաներեն	10	3%
Իսպաներեն	3	1%
Իտալերեն	1	0.5%
Հունարեն	2	1%
Պարսկերեն	2	1%

3. Ուսումնական գործընթացների գնահատման արդյունքները

Ստորև՝ Աղյուսակ 6-ում, ներկայացված են հարցմանը մասնակցած՝ ՃՇՀԱՀ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 320 անդամների ուսումնական գործընթացին վերաբերող մի շարք բնութագրիչների գնահատականները:

Համաձայն Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալների, հարցվողները առավելապես դժգոհ են.

- ուսանողների՝ դասընթացներին հաճախելիությունից (միջին գնահատական՝ 2.8[1], դժգոհներ՝ 82, ընդհանուրի 26%-ը),
- բակալավրիատի (միջին գնահատական՝ 2.5) և մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի (միջին գնահատական՝ 2.4) ուսանողների կրթական մակարդակից և որակական հատկանիշներից,
- բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի հստակ տարանջատման բացակայությունից (միջին գնահատական՝ 2.4),
- դասընթացները լավ կազմակերպելուն խոչնդոտող լսարանային և տեխնիկական պայմաններից (միջին գնահատական՝ 2.3):

Դասախոսները նշել են, որ ընդհանուր առմամբ գոհ են իրենց դասընթացների և դասավանդմանն առնչվող գործընթացների ժամանակացույցից (միջին գնահատական՝ 1.9) և ունեն բոլոր միջոցներն ու ռեսուրսները դասավանդման գործընթացը որակյալ և արդյունավետ

[1] 1 – լիովին գոհ են, 2 – գոհ են, 3- մասամբ գոհ են, 4 – բոլորովին գոհ չեն

կազմակերպելու համար (միջին գնահատական՝ 1.9):

Ուսումնական գործընթացին վերաբերող գործընթացների գնահատականները ներկայացված են ստորև, Աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 6. Ուսումնական գործընթացների գնահատման արդյունքները

Հ.	Հարց	**Միջին գնահատական**	Լիովին համաձայն եմ (1)	Համաձայն եմ (2)	Մասամբ համաձայն չեմ (3)	Բոլորովին համաձայն չեմ (4)	Չեմ կարող ասել (0)
9	Ես գոհ եմ համալսարանի կրթական գործընթացներից:	**2.2**	51 (16%)	159 (50%)	78 (24%)	9 (3%)	23 (7%)
10	Ներկայացվող կրթական պահանջները ուսանողներին օգնում են դառնալ իրենց ոլորտի բարձրորակ և պահանջված մասնագետ:	**2.2**	55 (17%)	143 (45%)	88 (28%)	13 (4%)	21 (7%)
11	Ես գոհ եմ բակալավրիատի ուսանողների կրթական մակարդակից և որակական հատկանիշներից:	**2.5**	26 (8%)	132 (41%)	119 (37%)	29 (9%)	14 (4%)
12	Ես գոհ եմ մագիստրատուրայի/ասպիրանտուրայի ուսանողների կրթական մակ-ից և որակ-ն հատկ-ից:	**2.4**	22 (7%)	108 (34%)	73 (23%)	19 (6%)	98 (31%)
13	Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի տարանջատումը հստակ է և նպատակային:	**2.4**	42 (13%)	106 (33%)	69 (22%)	40 (13%)	63 (20%)
14	Ես գոհ եմ ուսանողների դասընթացներին հաճախելիությունից:	**2.8**	27 (8%)	100 (31%)	98 (31%)	82 (26%)	13 (4%)
15	Ես գոհ եմ իմ դասընթացների և դասավանդմանն առնչվող գործընթացների ժամանակացույցից:	**1.9**	112 (35%)	133 (42%)	50 (16%)	17 (5%)	8 (3%)
16	Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները դասավանդման գործընթացը որակյալ և արդյունավետ կազմակերպելու համար:	**1.9**	132 (41%)	113 (35%)	47 (15%)	20 (6%)	8 (3%)
17	Ստեղծված պայմանները՝ այդ թվում լսարանային և տեխնիկական, բավարար են դասընթացները լավ կազմակերպելու համար:	**2.3**	79 (25%)	106 (33%)	78 (24%)	47 (15%)	10 (3%)
18	Լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:	**2.2**	84 (26%)	85 (27%)	48 (15%)	49 (15%)	54 (17%)
19	Համալսարանի կողմից օժանդակությունը կրթական հարցերում համապատասխան է և լավ կազմակերպված	**2.1**	77 (24%)	136 (43%)	61 (19%)	24 (8%)	22 (7%)
31	Առկա են դասավանդման արդյունքների և արդյունավետության գնահատման հստակ և արդար մեխանիզմներ:	**2.1**	84 (26%)	120 (38%)	67 (21%)	22 (7%)	27 (8%)

4. Աշխատանքային պայմանների և միջավայրի գնահատման արդյունքներ

Համաձայն ստորև՝ Աղյուսակ 7-ում ներկայացված տվյալների, հարցվողները ընդհանուր առմամբ գոհ են իրենց աշխատանքային պայմաններից և միջավայրից, բարձր են գնահատում նաև անմիջական ղեկավարի հետ աշխատանքն ու հաղորդակցությունը:

Հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ իրենց ամբիոնի ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի իրենց դասընթացների կազմակերպման գործընթացի նկատմամբ (հարց հ. 20, միջին գնահատական՝ 1.3): Նրանք նաև գտնում են, որ իրենց աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեն արտահայտվելու հնարավորություն (հարց հ. 23, միջին գնահատական՝ 1.4) և ժամանակին են տեղեկանում իրենց աշխատանքին առնչվող որոշումների մասին (հարց հ. 24, միջին գնահատական՝ 1.4):

Միևնույն ժամանակ, համեմատաբար ցածր, նորից դրական են գնահատվել «համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում» (հարց հ. 25, միջին գնահատական՝ 1.7) և «խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն» (հարց հ. 22, միջին

գնահատական՝ 1.6) պնդումները:

Աղյուսակ 7. Աշխատանքային պայմանների և միջավայրի գնահատման արդյունքները

Հ.	Հարց	Միջին գնահատական	Լիովին համաձայն եմ (1)	Համաձայն եմ (2)	Մասամբ համաձայն չեմ (3)	Բոլորովին համաձայն չեմ (4)	Չեմ կարող ասել (0)
20	Իմ ամբիոնի ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի դասընթացներիս կազմակերպման գործընթացի նկատմամբ:	**1.3**	223 (70%)	62 (19%)	9 (3%)	5 (2%)	21 (7%)
21	Ամբիոնում խրախուսվում է երկուստեք հաղորդակցությունը, թիմային աշխատանքը և համագործակցության ոգին:	**1.5**	199 (62%)	81 (25%)	19 (6%)	11 (3%)	10 (3%)
22	Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն:	**1.6**	170 (53%)	97 (30%)	26 (8%)	5 (2%)	22 (7%)
23	Իմ աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեմ արտահայտվելու հնարավորություն:	**1.4**	216 (68%)	81 (25%)	15 (5%)	1 (0%)	7 (2%)
24	Իմ աշխատանքին առնչվող որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	**1.4**	217 (68%)	69 22%)	17 (5%)	9 (3%)	8 (3%)
25	Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	**1.7**	153 (48%)	105 (33%)	41 (13%)	6 (2%)	15 (5%)
26	Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուց-ում:	**1.5**	180 (56%)	92 (29%)	22 (7%)	9 (3%)	17 (5%)
27	Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի անդամները միմյանց հարգանքով են վերաբերվում:	**1.5**	194 (61%)	86 (27%)	17 (5%)	8 (3%)	15 (5%)

5. Աշխատավարձի, կարիերայի աճի և մասնագիտական զարգացման ու վերապատրաստումների հնարավորությունների գնահատման արդյունքները

Համաձայն Աղյուսակ 8-ում ներկայացված տվյալների, հարցվողները ընդհանուր առմամբ գոհ չեն իրենց աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից (հարց հ. 28, միջին գնահատական՝ 2.8): Նրանք նաև կարծում են, որ բավարար հնարավորություններ չունեն վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար (հարց հ. 31, միջին գնահատական՝ 2.3): Միևնույն ժամանակ, դասախոսները կարծում են, որ ընդհանուր առմամբ ունեն կարիերայի աճի հնարավորություն (միջին գնահատական՝ 2.0) և դրա համար առկա են արդար և հավասար պայմաններ (միջին գնահատական՝ 2.1):

Աղյուսակ 8. Աշխատավարձ, կարիերայի աճ, մասնագիտական զարգացում/վերապատրաստումներ

Հ.	Հարց	Միջին գնահատական	Լիովին համաձայն եմ (1)	Համաձայն եմ (2)	Մասամբ համաձայն չեմ (3)	Բոլորովին համաձայն չեմ (4)	Չեմ կարող ասել (0)
28	Ես գոհ եմ իմ աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից:	**2.8**	38 (12%)	84 (26%)	78 (24%)	101 (32%)	19 (6%)
29	Ես ունեմ կարիերայի աճի հնարավորություն:	**2.0**	101 (32%)	103 (32%)	42 (13%)	25 (8%)	49 (15%)
30	Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ:	**2.1**	88 (28%)	85 (27%)	60 (19%)	33 (10%)	54 (17%)
32	Համալսարանը վերապատրաստման և մասնագիտա-կան զարգացման հնարավորություններ է ընձեռում:	**2.3**	71 (22%)	102 (32%)	61 (19%)	40 (13%)	46 (14%)

6. Բաց հարցերի պատասխանների ամփոփում

Հարցման գործընթացը նախատեսում էր նաև բաց հարցերի շուրջ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի կարծիքների հավաքագրում: Ստացված կարծիքների ամբողջական ցանկը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 2-ում:

Համալսարանում առավել դրական գնահատված գործընթացների և երևույթների առաջին տասնյակը ներկայացված է ստորև, Աղյուսակ 9-ում: Դրական կարծիքների հիմնական մասը վերաբերում է աշխատանքային միջավայրին և պայմաններին.

Աղյուսակ 9. Առավել դրական գնահատված գործընթացների ցանկը

Հ/Հ	Նշված դրական կողմերը	Պատասխան-ների քանակը
1	Աշխատանքային միջավայրը, մթնոլորտը, բարի հարաբերությունները	112
2	Ուսանողների և դասախոսների միմյանց նկատմամբ անմիջական, անկեղծ, հարգալից վերաբերմունքը	53
3	Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի հմտությունները, բարյացակամ վերաբերմունքը միմյանց նկատմամբ	40
4	Աշխատանքային, շենքային պայմանները	18
5	Դասավանդման գործընթացը, կարգապահությունը	17
6	Կրթության որակի բարձրացման ցանկությունը բոլոր մակարդակներում	14
7	Կատարվող շին. վերանորոգման աշխատանքները, լաբորատորիաների վերանորոգումն ու կահավորումը	14
8	Ռեկտորի աշխատանքը, ռեկտորատի վերաբերմունքը դասախոսներին	11
9	Անմիջական ղեկավարությունը	11
10	Ուսանողների վերաբերմունքը իրենց ընտրած մասնագիտության նկատմամբ	10

Հարցվողները առավել հաճախ առաջարկել են բարեփոխումներ իրականացնել Աղյուսակ 10-ում ներկայացված գործընթացների շրջանակում (ամբողջական ցանկի համար տես Հավելված 2): Դասախոսները հիմնականում առաջարկել են բարեփոխումներ իրականացնել ուսումնական գործընթացի, աշխատավարձի, մասնագիտական զարգացման/վերապատրաստումների շրջանակում.

Աղյուսակ 10. Առավել հաճախ առաջարկված բարեփոխման գործընթացների ցանկ

Հ/Հ	Բարելավման ուղղությունները	Պատասխան-ների քանակը
1	Բարեփոխել, արդիականացնել ուսումնական գործընթացը և ծրագրերը, դրանք դարձնել առավել թիրախային, ի շահ ուսանողների, մեծացնել տեխն. հագեցվածությունը	44
2	Նոր համակարգիչներ, համակարգչային լսարաններ, տեխնիկական հագեցվածություն	34
3	Աշխատավարձ	30
4	Լաբորատոր պայմաններ, արհեստանոցներ, ազատ լսարաններ	27
5	Ուսանողների հաճախելիությունը, կարգապահությունը	23
6	Սոց. փաթեթ, ճաշարան, դասախոսների համար հանգստի սենյակ, սպորտային ենթակառուցվածք	22
7	Ավելացնել մասնագիտական պրակտիկայի ժամերը, արտադրական և ուսումնական պրակտիկա, ծանոթացում արտերկրի փորձի հետ	19
8	Շենքային և լսարանային պայմաններ, ջեռուցում, հարմարավետ սեղան-աթոռներ	16
9	Լաբորատոր, խմբային և գործնական պարապմունքների ավելացում, դրանց անցկացում դաշտային պայմաններում	13
10	Գրադարան, դասավանդվող նյութերի ժամանակակից տարբերակների ձեռք բերում, հրատարակում, աջակցություն նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում	9
11	Իրականացնել դասախոսների վերապատրաստում և ատեստավորում, ներգրավել պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետների	9
12	Գնահատման համակարգը, հստակեցնել լիկվիդացիոն շրջանը	8

Հարցվողները առավել հաճախ նշել են Աղյուսակ 11-ում և 12-ում ներկայացված մի շարք

վերապատրաստումների և համակարգչային ծրագրերի կարիքներ, որոնք կնպաստեն իրենց գործունեության բարելավմանն ու դասավանդման արդյունավետության բարձրացմանը (ամբողջական ցանկերի համար տես Հավելված 2).

Աղյուսակ 11. Վերապատրաստումների կարիքներ

Հ/Հ	Վերապատրաստումներ	Պատասխան-ների քանակը
1	Փորձի փոխանակում, վերապատրաստում արտերկրում և տեղի ԲՈՒՀ-երում, մասնակցություն գիտաժողովների	61
2	Օտար լեզուներ՝ անգլերեն, նաև մասնագիտական	38
3	Մասնագիտական վերապատրաստում, որակավորման բարձրացում, կապ արտադրության հետ	27
4	Նորագույն տեխնոլոգիաների ուսուցում	15
5	Համակարգչային	13
6	ArchiCAD, AutoCAD, համակարգչային ծրագրեր	8
7	Դասավանդման ժամանակակից մեթոդներ	5
8	3D Max համակարգչային ծրագիր	3
9	Երկրատեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահար զոնդավորում	3

Աղյուսակ 12. Համակարգչային ծրագրերի կարիքներ

Հ/Հ	Համակարգչային ծրագրեր	Պատասխան-ների քանակը
1	AutoCAD, ArchiCAD, AutoCAD Civil	64
2	3D Max, Photoshop	24
3	MS Excel, MS Word, Power Point	8
4	Lira	7
5	GIS ծրագրեր, ArcGIS	6
6	Plaxis	5
7	CorelDRAW	4
8	Revit	3
9	Civil-10, 15	3

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հարցման արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

ա. Հարցվողներն առավելապես դժգոհ են.

- Ուսանողների՝ դասընթացներին հաճախելիությունից (միջին գնահատական՝ 2.8, դժգոհներ՝ 82 կամ ընդհանուրի 26%-ը),
- բակալավրիատի (միջին գնահատական՝ 2.5) և մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի (միջին գնահատական՝ 2.4) ուսանողների կրթական մակարդակից և որակական հատկանիշներից,
- բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի հստակ տարանջատման բացակայությունից (միջին գնահատական՝ 2.4),
- դասընթացները լավ կազմակերպելուն խոչնդոտող լսարանային և տեխնիկական պայմաններից (միջին գնահատական՝ 2.3),
- աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից (հարց հ. 28, միջին գնահատական՝ 2.8, դժգոհներ՝ 101 կամ ընդհանուրի 32%-ը),
- վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար ստեղծված հնարավորություններից (հարց հ. 31, միջին գնահատական՝ 2.3):

բ. Հարցվողներն ընդհանուր առմամբ գոհ էին.

- իրենց աշխատանքային պայմաններից և միջավայրից,
- անմիջական ղեկավարի հետ իրենց աշխատանքից ու հաղորդակցությունից,
- ամբիոնի ղեկավարի կառուցողական և քաջալերող մոտեցումից իրենց դասընթացների կազմակերպման գործընթացի նկատմամբ (հարց հ. 20, միջին գնահատական՝ 1.3),
- որոշումների կայացման ընթացքում արտահայտվելու հնարավորություն ունենալուց (հարց

հ. 23, միջին գնահատական՝ 1.4),

- ժամանակին իրենց աշխատանքին առնչվող որոշումների մասին տեղեկանալուց (հարց հ. 24, միջին գնահատական՝ 1.4),
- համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին տեղեկանալուց (հարց հ. 25, միջին գնահատական՝ 1.7),
- խնդրահարույց հարցերի անաչառորեն լուծումից (հարց հ. 22, միջին գնահատական՝ 1.6):

գ. Հարցման արդյունքներով առաջարկում ենք մշակել համալսարանի առաքելությանը և ռազմավարությանը համահունչ բարեփոխումների պլան, ուղղված.

- դասընթացներին ուսանողների հաճախելիության և գնահատման համակարգի բարելավմանը (նախագիծը մշակվել է),
- յուրաքանչյուր կրթական ծրագրի շրջանակում բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի բովանդակային հստակ տարբերակմանը,
- կրթական ծրագրերի վերանայմանն՝ ուղղված պահանջվող մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռք բերմանը,
- համակարգչային և ընդհանուր լսարանների տեխնիկական հագեցվածության բարձրացմանն ու լաբորատոր պայմանների ու արհեստանոցների բարելավմանը,
- մասնագիտական՝ ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամերի ավելացմանն ու որակի բարձրացմանը,
- ուսանողների կրթական մակարդակը և որակական հատկանիշները բարելավելու նպատակով՝ լրացուցիչ կրթական միջոցառումների իրականացմանը,
- դասալսումների կարգի մշակմանը (նախագիծը մշակվել է) և կազմակերպմանը՝ դասավանդման կարողությունները և հմտությունները գնահատելու համար,
- պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի վերապատրաստման, մասնագիտական զարգացման և առաջխաղացման քաղաքականության մշակմանն ու միջոցառումների իրականացմանը (օրինակ՝ դասախոսական կազմի գնահատման կրեդիտային համակարգի ներդրման միջոցով):

Հավելված 1.

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)

Ա. _____
Ամսաթիվ

Հարցաթերթ՝ համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի հարցման

1. Համալսարանում աշխատանքի ընդունվելու տարին՝ _____ թ.
2. Տարիքը՝ [1] մինչև 35 տարեկան [2] 36-45 տարեկան [3] 46-63 տարեկան [4] 63 տ-ից բարձր
3. Սեռը՝ [1] իգական [2] արական
4. Խնդրում ենք նշել Ձեր զբաղվածությունը, որպես դասավանդող՝
   [1] լրիվ դրույք [2] կես դրույք
   [3] Ժամավճար [4] Այլ, նշել _____
5. Ձեր գիտական կոչումը՝ _____ (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր)
6. Ձեր գիտական աստիճանը՝ _____ (գիտությունների թեկնածու, դոկտոր)
7. Խնդրում ենք նշել այն օտար լեզուները, որոնցով կարող եք դասավանդել՝
   [1] Ռուսերեն [2] Անգլերեն
   [3] Այլ, նշել _____
8. Ներկա՝ 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում, ի՞նչ ծանրաբեռնվածություն (ժամաքանակ) ունեք հետևյալ կրթական աստիճաններում՝
   [1] Ընդամենը՝ _____ ժամ, այդ թվում՝
   [2] Բակալավրիատ՝ _____ ժամ
   [3] Մագիստրատուրա՝ _____ ժամ
   [4] Ասպիրանտուրա՝ _____ ժամ

Արդյոք համաձա՞յն եք կրթական գործընթացին վերաբերող հետևյալ պնդումների հետ.

		Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	Մասամբ համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ	Չեմ կարող ասել
9.	Ես գոհ եմ համալսարանի կրթական գործընթացներից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
10.	Ներկայացվող կրթական պահանջները ուսանողներին օգնում են դառնալ իրենց ոլորտի բարձրորակ և պահանջված մասնագետ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
11.	Ես գոհ եմ բակալավրիատի ուսանողների կրթական մակարդակից և որակական հատկանիշներից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
12.	Ես գոհ եմ մագիստրատուրայի/ասպիրանտուրայի ուսանող-ների կրթական մակարդակից և որակական հատկանիշներից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
13.	Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի տարանջատումը հստակ է և նպատակային:	(1)	(2)	(3)	(4)	(0)
14.	Ես գոհ եմ ուսանողների դասընթացներին հաճախելիությունից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
15.	Ես գոհ եմ իմ դասընթացների և դասավանդմանն առնչվող գործընթացների ժամանակացույցից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
16.	Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները դասավանդման գործընթացը որակյալ և արդյունավետ կազմակերպելու համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)
17.	Ստեղծված պայմանները՝ այդ թվում լսարանային և տեխնիկա-կան, բավարար են դասընթացները լավ կազմակերպելու համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)

18.	Լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
19.	Համալսարանի կողմից օժանդակությունը կրթական հարցերում համապատասխան է և լավ կազմակերպված:	(1)	(2)	(3)	(4)	(0)
20.	Իմ ամբիոնի ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի դասընթացներիս կազմակերպման գործընթացի նկատմամբ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
21.	Ամբիոնում խրախուսվում է երկուստեք հաղորդակցությունը, թիմային աշխատանքը և համագործակցության ոգին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
22.	Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
23.	Իմ աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեմ արտահայտվելու հնարավորություն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
24.	Իմ աշխատանքին առնչվող որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
25.	Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
26.	Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
27.	Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի անդամները միմյանց հարգանքով են վերաբերվում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
28.	Ես գոհ եմ իմ աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
29.	Ես ունեմ կարիերայի աճի հնարավորություն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
30.	Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
31.	Առկա են դասավանդման արդյունքների և արդյունավետության գնահատման հստակ և արդար մեխանիզմներ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
32.	Համալսարանը հնարավորություններ է ընձեռում վերապատ-բաստման և մասնագիտական զարգացման համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)

33. Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս (նշել 2-ը)՝

    1. _____

    2. _____

34. Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել (նշել 2-ը)՝

    1. _____

    2. _____

35. Դասավանդման արդյունավետության համար անհրաժեշտ են հետևյալ համակարգչային ծրագրերը՝

    1. _____, 2. _____

36. Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ (նշել 2-ը)՝

    1. _____, 2. _____

Հավելված 2.

Հարցաթերթի բաց հարցերին տրված պատասխանները և դրանց կրկնվելու հաճախականությունը

Հարց հ 33. Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս.

Հ/Հ	Նշված դրական կողմերը	Հաճախա-կանությունը
1	աշխատանքային միջավայրը, մթնոլորտը, բարի հարաբերությունները	112
2	Ուսանողների և դասախոսների միմյանց նկատմամբ անմիջական, անկեղծ, հարգալից վերաբերմունքը	53
3	պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի հմտությունները, բարյացակամ վերաբերմունքը միմյանց նկատմամբ	40
4	աշխատանքային, շենքային պայմանները	18
5	դասավանդման գործընթացը, կարգապահությունը	17
6	կրթության որակի բարձրացման ցանկությունը, բոլոր մակարդակներում	14
7	կատարվող շին. վերանորոգման աշխատանքները, լաբորատորիաների վերանորոգումն ու կահավորումը	14
8	Ռեկտորի աշխատանքը, ռեկտորատի վերաբերմունքը դասախոսներին	11
9	անմիջական ղեկավարությունը	11
10	ուսանողների վերաբերմունքը իրենց ընտրած մասնագիտության նկատմամբ	10
11	երիտասարդներին աջակցությունը	9
12	դասերի կազմակերպումը, դասավանդման կազմակերպումը	5
13	խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն	5
14	Տեղեկացված լինելու, գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորությունը	4
15	միջազգային հարաբերությունները	4
16	գիտական հոդվածներ տպելու հնարավորությունը, գիտական սեկտորի աշխատանքը	3
17	կարիերայի աճի հնարավորությունը	3
18	Բազմաթիվ միջոցառումների կազմակերպում՝ սեմինարներ, գիտաժողովներ	2
19	զանգը	2
20	ոլորտի հեղինակավոր մասնագետների հետ շփվելու հնարավորությունը	2
21	ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում	1
22	դասախոսների պատրաստակամությունը աշխատելու ցածր աշխատավարձով	1
23	գիտության նկատմամբ խստապահանջ մոտեցումը	1

Հարց հ 34. Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել.

Հ/Հ	Բարելավման ուղղությունները	Հաճախա-կանությունը
1	Բարեփոխել, արդիականացնել ուսումնական գործընթացը և ծրագրերը, դրանք դարձնել առավել թիրախային, ի շահ ուսանողների, մեծացնել տեխնիկական հագեցվածությունը	44
2	նոր համակարգիչներ, համակարգչային լսարաններ, տեխնիկական հագեցվածություն	34
3	Աշխատավարձը	30
4	լաբորատոր պայմաններ, արհեստանոցներ, ազատ լսարաններ	27
5	Ուսանողների հաճախելիությունը, կարգապահությունը	23
6	սոց. փաթեթ, ճաշարան, դասախոսների համար հանգստի սենյակ, սպորտային ենթակառ.	22
7	ավելացնել մասնագիտական պրակտիկայի ժամերը, արտադրական և ուսումնական պրակտիկա, ծանոթացում արտերկրի փորձի հետ	19
8	Շենքային և լսարանային պայմաններ, ջեռուցում, հարմարավետ սեղան-աթոռներ	16
9	լաբորատոր, խմբային և գործնական պարապմունքների ավելացում, անցկացում դաշտային պայմաններում	13
10	գրադարան, դասավանդվող նյութերի ժամանակակից տարբերակների ձեռք բերում, հրատարակում, աջակցություն նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում	9

11	իրականացնել դասախոսների վերապատրաստում և ատեստավորում, ներգրավել պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետների	9
12	Գնահատման համակարգը, հստակեցնել լիկվիդացիոն շրջանը	8
13	ուսանողների ընդունելության կարգը	7
14	բարձրացնել դասախոսների մակարդակը, դասախոսների պարբերաբար վերապատրաստումներ, թեմատիկ կլոր սեղաններ	6
15	մասնակցություն միջազգային գիտաժողովներին և մրցույթներին	6
16	Բարեփոխել որոշ ամբիոններ, որոնք շատ փոքր են	5
17	սերտ համագործակցություն արտադրության և համալսարանի միջև	5
18	Որոշակի խստացումներ՝ գիտական թեզերի առումով	4
19	համակարգչային հմտությունների դասավանդումը	4
20	դասերը սկսել 9:00, դասընթացի անցկացման ժամանակացույցը	4
21	բարձրացնել ղեկավարների, դասախոսների, ուսանողների պատասխանատվության զգացումը	4
22	օդափոխություն, սանհանգույց,	4
23	Ստեղծել կենտրոնացված և կահավորված համաշինարարական լաբորատորիա	3
24	ժամանակակից տեխնոլոգիաների և ծրագրային փաթեթների առկայություն	3
25	մագիստրոսական և դիպլոմային աշխատանքին ներկայացվող պահանջների ավելացում	3
26	վերաբերմունքը ոչ մասնագիտական առարկաների նկատմամբ	3
27	օտար լեզվի դասավանդման մեթոդոլոգիան, հատկացնել շատ ժամեր	2
28	փոքրաթիվ խմբերին հատկացնել լսարան	2
29	վերանայել աշխատանքային ծանրաբեռնվածությունը	2
30	դասխոսներին վերահսկելու մեխանիզմները	2
31	Արտոնություններ երիտասարդ աշխատակիցների համար	1
32	Ընդգրկվելը պայմանագրային աշխատանքների մեջ	1
33	Միջոցառումներ և հանդիպումներ դասախոսների և ղեկավարության (ռեկտորի) միջև	1
34	կառավարման համակարգը	1
35	դեկանատների ամենօրյա աշխատանքը	1
36	բարիդրացիական մարդկային հարաբերությունները	1
37	դասերն անցկացնել հիմնական մասնաշենքում	1
38	անցում կատարել 6 ամյա համակարգի	1
39	ուսանողական նախագծերը պահանջել ձեռքով	1
40	որոշ օֆիսներ նորից դարձնել լսարան	1
41	ավարտական խմբերի պաշտպանության ժամանակ հրավիրված հանձնաժողովների խրախուսման հարցը	1
42	ավելացնել հայերենի ժամերը	1
43	դասազանգի հնչողությունը	1
44	ստեղծել ուսանողական նախագծային և արտադրական կենտրոն	1
45	դիզայն մասնագիտության ասպիրանտուրա	1
46	հստակ որակավորել ուսանողի ավարտական դիպլոմի որակավորում	1
47	աշխատանքային նյութեր տրամադրել լսարանում օգտագործման համար	1
48	քննական համակարգը դարձնել գրավոր	1
49	ուժեղացնել ամբիոնների միջև կապը	1
50	խիստ հսկողություն սահմանել համաբուհական ամբիոնների նկատմամբ	1
51	հստակեցնել մագիստրատուրայի և բակալավրիատի ծրագրերը	1

Հարց հ 35. Դասավանդման արդյունավետության համար անհրաժեշտ են հետևյալ համակարգչային ծրագրերը.

Հ/Հ	Համակարգչային ծրագրերը	Հաճախա-կանությունը
1	AutoCAD, ArchiCAD, AutoCAD Civil	64
2	3D Max, Photoshop	24
3	MS Excel, MS Word, power point	8
4	lira	7

5	GIS ծրագրեր, ArcGIS	6
6	Plaxis	5
7	CorelDRAW,	4
8	Revit	3
9	Civil-10, 15	3
10	Credo	2
11	ջեռուցման, օդափոխության, օդի կոնդենսացիայի հաշվարկի/նախագծման ծր-եր	2
12	3D սկանավորման ծրագիր	2
13	fontLab	2
14	Geo Slope	2
15	hidrostate	2
16	matlab	2
17	SAP	1
18	RINO համակարգչային ծրագիր	1
19	համակարգչային ծրագրերը ուսմանը չեն նպաստում	1
20	sekech up,	1
21	Blender (3D)	1
22	maya, zbrush	1
23	ppt	1
24	solid work	1
25	spss	1
26	c++	1

Հարց h. 36. Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ.

Հ/Հ	Վերապատրաստումները	Հաճախա-կանությունը
1	փորձի փոխանակում, վերապատրաստում արտերկրում և տեղի ԲՈՒՀ-երում, մասնակցություն գիտաժողովների	61
2	Օտար լեզուներ՝ անգլերեն, նաև մասնագիտական	38
3	մասնագիտական վերապատրաստում, որակավորման բարձրացում, կապ արտադրության հետ	27
4	նորագույն տեխնոլոգիաների ուսուցում	15
5	Համակարգչային	13
6	ArchiCAD, AutoCAD, համակարգչային ծրագիր	8
7	դասավանդման ժամանակակից մեթոդներ	5
8	3D Max համակարգչային ծրագիր	3
9	երկրատեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահար զոնդավորում	3
10	կառավարման հմտություններ	2
11	ArchGIS	2
12	Տեխնոլոգիաների կիրառումը ճարտ. նախագծման մեջ, ճարտ. գրաֆիկա	2
13	ֆրանսերեն լեզու	2
14	data distingution after the network	2
15	էլեկտրոնային դասավանդում	1
16	կրթական ծրագրերի կազմում	1
17	ժամանակակից գեոդեզիայի գործիքների ուսումնասիրություն	1
18	Ճարտ. նյութագիտություն	1
19	ծանոթացում հուշարձանների վերականգնման մասնագիտական գործիքների հետ	1
20	toefl	1
21	CELTA	1
22	համագործակցային և հոգեբանական թրեյնինգ ուսանողների հետ աշխատելու մասին	1
23	C++	1
24	cloud computry	1